# Արձանագրություն N 5

**ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05 ծածկագրով գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ծրագրային ապահովման մշակման ծառայությունների /իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) նոր գործառնական հնարավորությունների ներդնում/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.03.2026թ. ժամը 16:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

**Նիստին մասնակցում էին՝**
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Էլինա Քեթիբյանը, Արմեն Սարգսյանը, Սարգիս Սեդրակյանը, Նարեկ Սելվինազյանը,
հանձնաժողովի քարտուղար՝ Անի Ահարոնյանը:
**Նիստից բացակայում էր ՝**
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սեդա Պարոնիկյանը:

## Օրակարգ

**ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին**

**ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ԼՈՒԻՍՈՖԹ» ՍՊԸ և «ԴՈՒՆԱՅՍ» ՍՊԸ համատեղ գործունեության կարգով հայտ ներկայացրած մասնակցի մասով հանձնաժողովը արձանագրում է.

- Մասնակցի հայտում ներկայացված է «Կոլեկտիվ մասնակցության համաձայնագիր», սակայն համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել «Համատեղ գործունեության պայմանագիր»: Ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված «Կոլեկտիվ մասնակցության համաձայնագիր» փաստաթղթի 3.1 կետում որպես պատվիրատու նշված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, մինչդեռ գնման ընթացակարգով պատվիրատու է հանդիսանում ՀՀ արդարադատության նախարարությունը:
- Մասնագիտական փորձառությունը գնահատելու նպատակով ներկայացված № 79422-HOP-25 համարով պայմանագիրը, ըստ ներկայացված փաստաթղթերում առկա

տվյալների, գտնվում է կատարման փուլում և ավարտված չէ, ուստի հանձնաժողովը այն չի դիտարկում մասնագիտական փորձի գնահատման շրջանակում:

- Մասնագիտական փորձառության գնահատման նպատակով ներկայացված № 68429-НОД-24, № 79422-НОР-25 և № 62241-НОД-23 համարներով պայմանագրերը հանձնաժողովը չի դիտարկում մասնագիտական փորձի գնահատման շրջանակում, քանի որ այդ պայմանագրերով մատուցված ծառայությունների ծավալի գումարային արտահայտությունը պակաս է սույն ընթացակարգի գնման գնի տասը տոկոսից:
- Մասնագիտական փորձառությունը գնահատելու նպատակով ներկայացված № 240624, № 62918-НОЭ-23, № 60956-НОЭ-22, № 70742-НОР-24, № ИТ-231, № 79422-НОР-25, № ИТ-226-АВИК-041-23-Р07, № ИТ-235, № 68338-НОЗ-24, № 42309, № АХД231627, № ИТ-221, № 0019904, № 66105-НОР-23, № 0019820, № Дог-3500-24-00000428, № 240624, № 65002-НОР-23, № 70053-НОР-24, № 74445-НОР-25, № СП1-D80008, № ИТ-217 և № СП1-DR0029 համարներով պայմանագրերը հանձնաժողովը չի դիտարկում մասնագիտական փորձի գնահատման շրջանակում, քանի որ դրանց բովանդակությունը չի համապատասխանում տեխնիկական առաջադրանքով նկարագրված աշխատանքներին: Տեխնիկական առաջադրանքով նկարագրված է պետական կառավարման համակարգի տեղեկատվական համակարգի մշակման, ներդրման և սպասարկման ծառայություններ: Ի տարբերություն թիրախային լսարան ունեցող առևտրային SS լուծումների, պետական տեղեկատվական համակարգերը (օրինակ՝ e-draft.am-ը) պարտավոր են ապահովել համընդհանուր հասանելիություն: Սա ենթադրում է WCAG 2.1 ստանդարտների կիրառում և տեխնիկական օպտիմալացում, քանի որ օգտատերն այստեղ հանդես է գալիս որպես սահմանադրական իրավունքներով օժտված քաղաքացի, այլ ոչ թե պարզապես սպառող: Նաև, ի տարբերություն առևտրային լուծումների, որոնք սահմանափակվում են կորպորատիվ խնդիրների շրջանակով և պարզեցված գործողությունների տրամաբանությամբ օգտատիրոջ փորձառությունը բարելավելու համար, պետական համակարգերը գործում են հանրային իրավունքի տիրույթում և պարտավոր են երաշխավորել հանրային վստահությունը պետական ինստիտուտների հանդեպ, ապահովել տվյալների իրավական հետագծելիությունն ու հանրային վերահսկողությունը, ինչպես նաև ապահովել տվյալների անհերքելիությունը՝ հաշվի առնելով, որ տվյալների հետ կատարվող գործողություններն ունեն իրավական հետևանքներ: Նաև նշված պայմանագրերի մասով՝ բացառությամբ № 79422-НОР-25 և № 0019798 համարով պայմանագրի ներկայացված չեն հրավերով պահանջված հաշիվ-ապրանքագրերը:
- Մասնագիտական փորձառությունը գնահատելու նպատակով ներկայացված № СП1-D80008 համարներով պայմանագրերի մասով հայտում բացակայում են հրավերով պահանջվող հաշիվ-ապրանքագրերը, որոնց ներկայացումը պարտադիր է պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստելու և մասնագիտական փորձառության չափանիշը գնահատելու համար:

- Մասնակցի կողմից որպես աշխատանքային ռեսուրս ներկայացված Համակարգային ճարտարապետ Արտակ Համազասպյանի փորձը հավաստող «ԼՈՒԻՍՈՖԹ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկանքի պատճենում առկա չէ ստորագրությունը:

«ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ մասնակցի մասով հանձնաժողովը արձանագրում է.

- Մասնագիտական փորձառությունը գնահատելու նպատակով ներկայացված N ՓՍՍ-ԲՄԽԾՁԲ-24/01 և N ԵԷՏ-ԲՄԽԾՁԲ-24/01 համարներով պայմանագրերը հանձնաժողովը չի դիտարկում մասնագիտական փորձի գնահատման շրջանակում, քանի որ դրանց բովանդակությունը չի համապատասխանում տեխնիկական առաջադրանքով նկարագրված աշխատանքներին: Տեխնիկական առաջադրանքով նկարագրված է պետական կառավարման համակարգի տեղեկատվական համակարգի մշակման, ներդրման և սպասարկման ծառայություններ: Ի տարբերություն թիրախային լսարան ունեցող առևտրային ՏՏ լուծումների, պետական տեղեկատվական համակարգերը (օրինակ՝ e-draft.am-ը) պարտավոր են ապահովել համընդհանուր հասանելիություն: Սա ենթադրում է WCAG 2.1 ստանդարտների կիրառում և տեխնիկական օպտիմալացում, քանի որ օգտատերն այստեղ հանդես է գալիս որպես սահմանադրական իրավունքներով օժտված քաղաքացի, այլ ոչ թե պարզապես սպառող: Նաև, ի տարբերություն առևտրային լուծումների, որոնք սահմանափակվում են կորպորատիվ խնդիրների շրջանակով և պարզեցված գործողությունների տրամաբանությամբ օգտատիրոջ փորձառությունը բարելավելու համար, պետական համակարգերը գործում են հանրային իրավունքի տիրույթում և պարտավոր են երաշխավորել հանրային վստահությունը պետական ինստիտուտների հանդեպ, ապահովել տվյալների իրավական հետագծելիությունն ու հանրային վերահսկողությունը, ինչպես նաև ապահովել տվյալների անհերքելիությունը՝ հաշվի առնելով, որ տվյալների հետ կատարվող գործողություններն ունեն իրավական հետևանքներ:
- Մասնագիտական փորձառությունը գնահատելու նպատակով ներկայացված № ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-24/1 համարով պայմանագրի մասով հայտում բացակայում է տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 3 համաձայնագիրը:
- Մասնագիտական փորձառությունը գնահատելու նպատակով ներկայացված UNDP 10069211 համարով պայմանագրի մասով բացակայում են պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև հաշիվ-ապրանքագրերը:

Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց՝

1. «ԼՈՒԻՍՈՖԹ» ՍՊԸ-ի և «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել իրավերի պահանջներին անհամապատասխան և, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ անհամապատասխանությունները շտկելու նպատակով:

2. Հաջորդ նիստը հրավիրել 2026թ. մարտի 09-ին, ժամը 11:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:**

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Էլինա Քեթիբյան

____________ Արմեն Սարգսյան

____________ Սարգիս Սեդրակյան

____________ Նարեկ Սելվինազյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Անի Աչարոնյան

# Протокол 5

**Заседания оценочной комиссии процедуры с кодом ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05, созданного с целью приобретения на услуги по разработке программного обеспечения /внедрение новых функциональных возможностей на едином сайте публикации проектов правовых актов e-draft.am/через электронную систему закупок ARMEPS для нужд Министерство юстиции Республики Армения**

Заседание оценочнй комиссии состоялось 05.03.2026г. в 16:00ч. в административном здании Министерство юстиции Республики Армения, находящегося по адресу-г.Ереван, улица В. Саргсяна 3/8.

**На заседании участвовали:**
Члены оценочной комиссии-Элина Кетибян, Армен Саргсян, Саргис Седракян, Нарек Селвиназян,
Секретарь комиссии - Ани Агаронян.
**На заседании отсутствовала:**
Председатель оценочной комиссии- Седа Пароникян.

## ПОВЕСТКА ДНЯ

**О оценке заявок открытого конкурса с кодом ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05**

Оценочная комиссия процедуры закупок под кодом **ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05** изучила и зафиксировала, что в заявках, поданных участниками, имеются несоответствия, в частности:

В отношении участника, подавшего заявку в порядке совместной деятельности ООО «ЛУИСОФТ» и ООО «ДУНАЙС»

Комиссия отмечает, что:

• В заявке участника представлен документ «Соглашение о коллективном участии», однако при участии в порядке совместной деятельности (консорциума) необходимо представить «Договор о совместной деятельности». Кроме того, в пункте 3.1 документа «Соглашение о коллективном участии», представленного участником, в качестве заказчика указан Комитет государственных доходов Республики Армения, так как заказчиком по данной процедуре закупки является Министерство юстиции Республики Армения.

• Договор № 79422-НОР-25, представленный для оценки профессионального опыта, согласно имеющимся в представленных документах сведениям находится на стадии исполнения и не завершён, в связи с чем комиссия не рассматривает его в рамках оценки профессионального опыта.

• Договоры № 79422-НОР-25, № 68429-НОД-24 и № 62241-НОД-23, представленные для оценки профессионального опыта, комиссией не рассматриваются в рамках оценки профессионального опыта, поскольку стоимостное выражение объёма услуг, оказанных по данным договорам, составляет менее десяти процентов от цены закупки по данной процедуре.

• Договоры № 79422-НОР-25, № 240624, № 62918-НОЭ-23, № 60956-НОЭ-22, № 70742-НОР-24, № ИТ-231, № ИТ-226-АВИК-041-23-Р07, № ИТ-235, № 68338-НОЗ-24, № 42309, № АХД231627, № ИТ-221, № 0019904, № 66105-НОР-23, № 0019820, № Дог-3500-24-00000428, № 240624, № 65002-НОР-23, № 70053-НОР-24, № 74445-НОР-25, № ИТ-217, № СП1-DR0029, № 68429-НОД-24 и № 62241-НОД-23 комиссией не рассматриваются в рамках оценки профессионального опыта, поскольку их содержание не соответствует работам, описанным в техническом задании.

Техническим заданием предусмотрены услуги по разработке, внедрению и сопровождению информационной системы государственного управления. В отличие от коммерческих ИТ-решений, ориентированных на определённую целевую аудиторию, государственные информационные системы (например, e-draft.am) обязаны обеспечивать универсальную доступность. Это предполагает применение стандартов WCAG 2.1 и техническую оптимизацию, поскольку пользователь в данном случае выступает как гражданин, обладающий конституционными правами, а не просто как потребитель.

Кроме того, в отличие от коммерческих решений, которые ограничиваются рамками корпоративных задач и применяют упрощённую логику действий для улучшения пользовательского опыта, государственные системы функционируют в сфере публичного права и обязаны обеспечивать общественное доверие к государственным институтам, юридическую прослеживаемость данных и общественный контроль, а также обеспечивать неопровержимость данных, учитывая, что действия, совершаемые с данными, могут иметь правовые последствия.

Также по указанным договорам, за исключением договора № 79422-НОР-25, в заявке отсутствуют счета-фактуры, требуемые приглашением.

• По договору № СП1-D80008, представленному для оценки профессионального опыта, в заявке отсутствуют счета-фактуры, требуемые приглашением.

• В копии справки, выданной ООО «ЛУИСОФТ» для подтверждения опыта системного архитектора Артака Амазаспяна, представленного участником в качестве трудового ресурса, отсутствует подпись.

В отношении участника ООО «ХЕЛИКС КОНСАЛТИНГ» комиссия отмечает:

• Договоры № N ՓՍՍ-ԲՄԽԾՁԲ-24/01 и N ԵԷՏ-ԲՄԽԾՁԲ-24/01, представленные для оценки профессионального опыта, комиссией не рассматриваются в рамках оценки профессионального опыта, поскольку их содержание не соответствует работам, описанным в техническом задании.

Техническим заданием предусмотрены услуги по разработке, внедрению и сопровождению информационной системы государственного управления. В отличие от коммерческих ИТ-решений, ориентированных на определённую целевую аудиторию, государственные информационные системы (например, e-draft.am) обязаны обеспечивать универсальную доступность. Это предполагает применение стандартов WCAG 2.1 и техническую оптимизацию, поскольку пользователь в данном случае выступает как гражданин, обладающий конституционными правами, а не просто как потребитель.

Кроме того, в отличие от коммерческих решений, которые ограничиваются рамками корпоративных задач и применяют упрощённую логику действий для улучшения пользовательского опыта, государственные системы функционируют в сфере публичного права и обязаны обеспечивать общественное доверие к государственным институтам, юридическую прослеживаемость данных и общественный контроль, а также обеспечивать неопровержимость данных, учитывая, что действия, совершаемые с данными, могут иметь правовые последствия.

• По договору № ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-24/1, представленному для оценки профессионального опыта, в заявке отсутствует соглашение № 3, являющееся неотъемлемой частью данного договора.

• По договору № UNDP 10069211 отсутствуют копия акта (протокола приёма-передачи), подтверждающего исполнение договора в установленный срок, либо письменное подтверждение стороны, принявшей исполнение договора, а также счета-фактуры.

Исходя из вышеизложенного комиссия решила:

1. Оценить заявки ООО «ЛУИСОФТ» и ООО "ХЕЛИКС КОНСАЛТИНГ" неудовлетворительным и, на основании пункта 41 Порядка, заседание приостановлено на один рабочий день.
2. Следующее заседание созвать 09.03.2026г., в 11:00 часов, в административном здании Министерство юстиции Республики Армения, г.Ереван, улица В. Саргсяна 3/8.

***Принято решение: за - 4, против – 0***

Члены комиссии

_______________ Элина Кетибян

_______________ Армен Саргсян

_______________ Саргис Седракян

_______________ Нарек Селвиназян

Секретарь комиссии _______________ Ани Агаронян